

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2017
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ, 10-ԸՆԴ ԴԱՍԱՐԱՆ
Տևողությունը 2,5 ժամ

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (15 միավոր)

1. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (9 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1-8-րդ առաջադրանքներ: (0,5 X 8 = 4 միավոր)

1. Ո՞վ էր գերի վերցրել Շապուհ II-ի կանանցը.

- 1) Վասակ Մամիկոնյան 3) Մուշեղ Մամիկոնյան
2) Վաչե Մամիկոնյան 4) Մանվել Մամիկոնյան

2. Ե՞րբ է կառավարել հայոց իշխանաց-իշխան Բագարատ Բագրատունին.

- 1) 850–855 թթ. 2) 826–851 թթ. 3) 855–885 թթ. 4) 415–419 թթ.

3. Մեծ Հայքի ո՞ր նահանգում էր նշանավոր Քթիշ ամրոցը.

- 1) Վասպուրական 2) Տուրուբերան 3) Սյունիք, 4) Արցախ

4. Ե՞րբ է ծնվել հայդուկապետ Գևորգ Չավուշը.

- 1) 1870 թ. 2) 1864 թ. 3) 1865 թ. 4) 1860 թ.

5. Ո՞ր ժողովում է ընդունվել «Մահմանադրություն կանոնական»-ը.

- 1) Աշտիշատ 2) Ադուեն 3) Շահապիվան 4) Շիրակավան

6. Ե՞րբ է ստեղծվել Արցախի մելիքությունների (Խամսա) ինքնավարությունը.

- 1) 1736 թ. 2) 1724 թ. 3) 1725 թ. 4) 1727 թ.

7. Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած հայկական ազգային զորամիավորումներից ո՞րն է առաջինը ռազմաճակատ մեկնել.

- 1) 76–րդ դիվիզիա 2) 89–րդ դիվիզիա 3) 390–րդ դիվիզիա 4) 408–րդ դիվիզիա

8. Ո՞վ է գլխավորել Հայրենիքի փրկության կոմիտեն (ՀՓԿ).

- 1) Հ. Օհանջանյան 2) Ս. Վրացյան 3) Հ. Քաջազնունի 4) Դ. Կանայան (Դրո)

բ. Լրացնել պատասխանը: (1 X 2 = 2 միավոր)

1. Ճակատամարտերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Ներսեհապատի
բ. Ավարայրի
գ. Ջիրավի
դ. Խաղամախայի
ե. Ակոռիի
զ. Խաղխաղի

1	2	3	4	5	6

2. Գահակալման տարիները համապատասխանեցնել արքայի անվանը.

- | | |
|----------------|---|
| 1. Ռուսա I | ա. Ք.ա. մոտ 835 – 825 թթ. |
| 2. Ռուսա II | բ. Ք.ա. մոտ 710–ական – 685 թթ. |
| 3. Սարգուրի I | գ. Ք.ա. մոտ 685 – 645 թթ. |
| 4. Սարգուրի II | դ. Ք.ա. մոտ 810 – 786 թթ. |
| 5. Արգիշտի I | ե. Ք.ա. 764 – 735 թթ. |
| 6. Արգիշտի II | զ. Ք.ա. 735 – մոտ 710–ական թթ.
է. Ք.ա. 786 – 764 թթ. |

1	2	3	4	5	6

գ. Լրացնել պատասխանը: (1 X 3 = 3 միավոր)

1. Գտնել երկու սխալ պնդումները. (0,5 X 2 = 1 միավոր)

ա. Հայոց իշխան Սմբատ Բագրատունին Հայաստան ներխուժած արաբական զորքին պարտության է մատնել, սակայն թշնամուն հետապնդելու ժամանակ ինքը ևս զոհվել է:

բ. Արևմտյան Հայաստանի հայրենասիրական ուժերը համախմբվելով ջախջախեցին Մծեժ Գնունուն, իսկ երկրի զորավարությունը ստանձնեց Դավիթ Սահառունին, որը կայսրից ստացավ «պատրիկ-կյուրապաղատի» աստիճան և ճանաչվեց հայոց իշխան:

գ. Հայոց գահին ամրանալու Հռադամիզդի ջանքերը դատապարտված էին անհաջողության, որովհետև նա իր հանցավոր գործողություններով աստելի էր հայ ժողովրդին:

դ. Հռոմեական կայսրությունում մղված գահակալական կռիվների ընթացքում չեզոքություն պահպանած հայոց Վաղարշ II թագավորը բանակցությունների միջոցով հաշտություն է կնքում հաղթանակած թեկնածուի և Հռոմի նոր կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ:

ե. 54 թ. ցրտաշունչ ձմռանը Հռադամիզդը վերադարձավ Արտաշատ և որոշեց հաշվեհարդար տեսնել հայ բնակչության հետ, սակայն զինված ժողովուրդը շրջապատեց պալատը, իսկ Հռադամիզդը կնոջ հետ փախուստի դիմեց:

զ. Հայերը ցանկանում էին ազատվել Հռադամիզդից ու հռոմեական միջամտությունից, ուստի ընտրեցին Պարթևստանի առաջարկությունը, քանզի պարթևները չէին սպառնում հայոց պետականության գոյությանը և կենցաղով, բարքերով ու սովորույթներով մոտ էին հայերին:

է. Խայտառակ ձևով պարտված Պետոսը սուտ լուր է ուղարկում Հռոմ, թե իբր Արևելքում իրավիճակը չի փոխվել, սակայն Ներոնը տեղեկացել էր, որ պարտված հռոմեական լեգեոնները հեռացել էին Հայաստանից:

--	--

2. Գտնել երկու սխալ պնդումները.

(0,5 X 2 = 1 միավոր)

ա. Գագիկ I-ը վերացրեց Վայոց ձորի Պռոշյանների իշխանությունը և նրա տարածքը նվիրեց Պահլավունիներին, որոնք այնտեղ իրականացրեցին լայնածավալ շինարարական աշխատանքներ:

բ. Դավիթ Անհողինը Գագիկ I-ից պարտություն կրեց և փախավ երկրից՝ զրկվելով իր տիրույթներից, սակայն հետագայում զոջաց և ներում խնդրեց ու միայն դրանից հետո հետ ստացավ իր տիրույթները:

գ. Աշոտ III թագավորն առանձնահատուկ հոգատարություն էր ցուցաբերում անդամալուծների, աղքատների, հիվանդների ու կույրերի նկատմամբ, նրանց համար բացում էր հիվանդանոցներ և այլ բարեգործական հաստատություններ:

դ. Աշոտ II-ի մահվանից հետո գահ բարձրացավ իր ավագ որդին՝ Կարսի կառավարիչ և հայոց սպարապետ Աբասը:

ե. Հայաստանի տարբեր մասերում առաջացած մանր թագավորությունները ենթարկվում էին «Շահնշահ հայոց» տիրոջը կողմ Անիի Բագրատունիներին ու չէին կարող գահակալել առանց շահնշահի հավանության և իրավասու չէին ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնելու հարևան պետությունների հետ:

--	--

3. Գտնել երկու ճիշտ պնդումները.

(0,5 X 2 = 1 միավոր)

ա. Ք.ա. 5 թ. Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկում իր որդեգիր Հուլիոս Կեսարին, որը գահընկեց է անում Տիգրան IV-ին:

բ. Տիգրան III-ի՝ շեշտված հակահռոմեական դիրքորոշման պատճառով Հռոմը նրան գահընկեց արեց և գահ բարձրացրեց նրա կրտսեր եղբորը՝ Արտաշես III-ին:

գ. Արտավազդ II-ը Կրասոսին առաջարկում էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով՝ հուսալով երկիրը գերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:

դ. Արտաշես I-ի հանձնարարությամբ Սմբատ Բագրատունի զորավարը ջախջախում է վրացական բանակը և Հայաստանին է վերադարձնում Գուգարք նահանգից զավթված տարածքները:

ե. Պարթևները ոչ միայն չստացան Պոմպեոսի խոստացած տարածքները, այլև Պոմպեոսը ճանաչեց Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը:

զ. Ք.ա. I դարում ապրած հռոմեացի պատմիչ Տակիտոսը հավաստիացնում է, որ Արտաշատի տեղանքն ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը:

--	--

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – ընտրանքներ: (0,5 X 4 = 2 միավոր)

1. Ո՞ւմ անվան հետ է կապված Աթենական պետության «Ոսկե դարը»:

- 1) Դեմոսթենես 2) Պիսիստրատ 3) Կլիսթենես 4) Պերիկլես

2. Ե՞րբ է Հուլիոս Կեսարը հռչակվել ցմահ դիկտատոր:

- 1) Ք.ա. 59 թ. 2) Ք.ա. 49 թ. 3) Ք.ա. 55 թ. 4) Ք.ա. 44 թ.

3. Վորմսի համաձայնագրի ստորագրմամբ ինչի՞ համար ընթացող պայքարն ավարտվեց:

- 1) Ինկվիզիցիա 2) Ինվեստիտուրա 3) Ինդուլգենցիա 4) Ռեֆորմացիա

4. Ե՞րբ է կառուցվել «Սառը պատերազմի» խորհրդանիշ Բեռլինի պատը:

- 1) 1961 թ. 2) 1949 թ. 3) 1968 թ. 4) 1955 թ.

բ. (1 X 2 = 2 միավոր)

1. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա) Կարթագենի կործանումը
բ) Սուլլայի դիկտատուրան
գ) Հռոմի կողմից Իտալիայի նվաճման

1	2	3	4	5

ավարտը

- դ) Պունիկյան երկրորդ պատերազմի ավարտը
ե) Չինական մեծ պարսպի կառուցման սկիզբը

2. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

- ա) Նապոլեոն Բոնապարտի հռչակվելը կայսր
բ) ԱՄՆ-ի Սահմանադրության ընդունումը
գ) Վիեննայի վեհաժողովը
դ) Առաջին սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում
ե) Առաջին հանրապետության հռչակումը Ֆրանսիայում

1	2	3	4	5

գ. (1 X 2 = 2 միավոր)

1. Հասկացությունները համապատասխանեցնել բացատրությանը.

1. Մասնավոր հողատիրույթ Հին Ռուսիայում, որը ձեռք էր բերվում ժառանգման և օտարման իրավունքով:
2. Սենյորի կողմից ավատը վասալին հանձնելու հանդիսավոր արարողություն:
3. Թագավորի կամ խոշոր հողատիրոջ կողմից իրենց նվիրված մարդկանց ծառայության դիմաց շնորհված հող:
4. Ռազմական գործողությունների հետևանքով հաղթող պետությանը հասցված վնասների և կորուստների դիմաց փոխհատուցում պարտված երկրի կողմից:

- ա) ինվեստիտուրա
- բ) ռեպարացիա
- գ) պետիցիա
- դ) բենեֆիցիում
- ե) վոտչինա

1	2	3	4

2. Տրված փաստերից որո՞նք են ճիշտ: Ընտրել երկու պատասխան:

- ա) Թեբեի փարավոն Թուֆնու I–ը գրավեց Ավարիսը, վտարեց հիքսոսներին և Եգիպտոսում հիմնադրեց նոր՝ XVIII հարստությունը:
- բ) Մայրոդոմ Պիպին Կարճահասակը գահընկեց արեց Մերովինգներին, յուրացրեց թագավորական տիտղոսը և 751 թ. Սուասոն քաղաքում թագավոր հռչակվեց:
- գ) Պարթևստանի վերելքը կապված էր Միհրդատ II–ի (Ք.ա. 123–87 թթ.) անվան հետ, որը մի շարք հաղթանակների արդյունքում իր գերիշխանությունը հաստատեց արևելքում Հինդուքուշի լեռներից մինչև Նեղոս գետն արևմուտքում:
- դ) 1215 թ. ապստամբները մտան Լոնդոն և թագավորին ներկայացրին 63 հոդվածներից բաղկացած իրենց պահանջները («Ազատությունների մեծ հրովարտակ»), որը, փաստորեն, միջնադարյան Անգլիայի սահմանադրությունն էր:
- ե) 1224 թ. ապրիլի 13–ին խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը և ստեղծեցին իրենց պետությունը՝ Լատինական կայսրությունը, որը գոյատևեց մինչև 1461 թ.:

--	--

II. ՊԱՏԱՄԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (5 միավոր)

1. Ներկայացրե՛ք Մակեդոնական (Հայկական) վերածնունդը, Խաչակրաց չորրորդ արշավանքը և Բյուզանդիան, Բյուզանդական կայսրության անկումը:

(2,5 միավոր)

2. Ներկայացրե՛ք Հայկական լեռնաշխարհը, Հայաստանի պատմավարչական բաժանումները և պատմաաշխարհագրական միջավայրի ազդեցությունը Հայոց պատմության վրա:

(2,5 միավոր)

Է. Մինասյան

Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

27. 02. 2017 թ.